

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

բնագրի իրավունքով

ՊԱՊՅԱՆ ՄՀԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

19.03.96.

ՀՈՎՀԱՆ ԻՄԱՍՏԱՍԵՐ ՕԶՆԵՑԻ
(Կյանքը և գործութեությունը)

Մասնագիտությունը. Հայոց պատմություն Է. 00. 01

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-1996

Աշխատանքը կատարվել է Երևանի պետական համալսարանում:

գիտական դեկան

բանասիրական գիտությունների
դոկտոր
Ա.Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների
դոկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հ.Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

պատմական գիտությունների
թեկնածու
Մ. Ս. ՇԻՐԻՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն

Խ. Արովյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 1996 թ.
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատմական գիտությունների
դոկտորի գիտական աստիճան շնորհող 004 մասնագիտական խորհրդի
նիստում (375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի 24 գ):

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ
պատմության ինստիտուտի գրադարանում:

Անդմագիրը առաված է „12 „ Տուրքի 1996 թ.

Մասնագիտական խորհրդի գիտական
ֆարտուղար, պատմական
գիտությունների թեկնածու

Ա.Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

- 3 -

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը. Ատենախոսությունը
նվիրված է 7-րդ դարի վերջի և 8-րդ դարի սկզբի հայ եկեղցու պատ-
մության խնդիրներին և հայոց կարողիկոս Հովհան Խմատասեր
Օձնեցու (717-728) կյանքին և գործունեությանը: Աշխատանքում
քննարկվում են Հովհան Օձնեցու եկեղեցական բարեփոխումների, գու-
մարած եկեղեցական ժողովների, քաղկեդոնականության և աղանդա-
վորական շարժումների ու եերձագածների դեմ պայքարի հարցերը:
Կարևոր տեղ է հատկացված Հովհան Օձնեցու ստեղծագործությանը և
նրա դերին հայ մատենագրության, փիլիսոփայության, եկեղեցական
իրավունքի, հոգևոր երաժշտության պատմության մեջ: Հովհան Օձնեցու
գործունեությունը ներկայացված է ժամանակի արտաքին և ներքին
հասարակական-քաղաքական իրողությունների և փոխհարաբերություն-
ների հետնախորքի վրա, որը հետաքարություն է տալիս նրան դիտել
նաև իրեն եկեղեցա-քաղաքական գործի:

Ատենախոսության մեջ փորձ է արվել հայ և օտար սկզբանա-
րյունների հիման վրա գնահատել Հովհան Օձնեցու գործունեության
կարևորությունը հայ եկեղեցու պատմության, նրա կանոնակարգի, ծի-
սկարգի և արարղակարգի զարգացման մեջ: Հատուկ ուշադրություն
է դարձված Հովհան Օձնեցու գործունեությանը՝ կապված հայ եկեղեցու
ազգայնացման հետ: Քննության է առնված Օձնեցու ստեղծագործութ-
յունը և մատենագրական ժառանգությունը:

Աշխատանքի վերջում ներկայացված են Երևանի Մաշտոցի անվան
մատենադարանի մեռագրերում Հովհան Օձնեցուն վերագրված երկու
անտիպ բնագիր: Հավելվածում ներկայացված են Հովհան Օձնեցու վար-
քը և հայատառ բուրքերենով պահպանված Պիոս 7-րդ պապի վճիռը
Հովհան Օձնեցու մասին:

Արդիականությունը և հրատապությունը. Հայ եկեղեցու պատ-
մությունը հայ ժողովրդի պատմության առավել ֆիչ ուսումնասիրված
բնագավառներից է: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն
հռչակելու 1700-ամյակի կապակցությամբ Հայաստանում և նրա սահ-
մաններից գուրս մեծացել է հետաքրությունը հայ եկեղեցու, նրա դա-
վանանի, ականավոր գործիչների և եկեղեցու պատմության առանց-
քային շրջափուլերի նկատմամբ:

Հովհան Օձնեցու միջնադարյան Հայաստանի մատենագրության,
մշակույթի, գիտության և հասարակական-քաղաքական կյանքի հշանա-
վոր դեմքներից է, այն սակավարիկ հեղինակներից, որ բարձր գնահա-

տուրյան և մեծարանքի է արժանացել դեռևս իր կենդանության օրով։ Հետագայում նա սրբացվել և կասվել է հայ եկեղեցու պրեբի կարգը։

Հովհան Օձնեցի հմասաւսեր կարողիկոսի կյանքն ու գործունեությունը առ այսօք պատմագիտուրյան կամ բանասիրության մեջ առանձին ուսումնասիրության նյութ չեն եանդիսացել։ Հովհան Օձնեցու մատենագրական ժառանգության և եկեղեցական գործունեության վերաբերյալ տրվել են իրարամերժ, հաճախ ծայրահեղության գնահատուկաններ։ Դա արդյունք է այն բաղադրական, դափանարանական պայքարի, որի հոլովույթում հայտնվել էր Հայաստանը 7-րդ դարի վերջին և 8-րդ դարի սկզբին։ Այս պայմանավորված էր նաև պատմագիրների և ուսումնասիրողների հաղանական համոզմութենքով, որից ելնելով երանք վերլուծել և գնահատել են Հովհան Օձնեցու գործունեությունն ու վաստակը։

Հայ եկեղեցու կանոնակարգի և ծրագրագի զարգացման գործում կարևոր տեղ են գրավում Հովհան Օձնեցու իրականացրած եկեղեցական բարեփոխումները և դափանարանական ճառերը, որոնց նշանակությունը եկեղեցու ազգայնացման գործում համապատասխան գիտական վերլուծության չեն ենթարկվել։

Հայագիտուրյան մեջ հականական և ոչ միշտ ընդունելի դիրքերից է ներկայացվել Հովհան Օձնեցու պայքարը բայկեղունակության և աղանդավորական շարժումների դեմ։ Ատենախոսության մեջ փորձել ենք անկողմնակալ և նորովի մոտեցում ցուցաբերել սկզբնադրյութեների հաղորդած տեղեկությունների նկատմամբ և Օձնեցու գործունեությունը դիտել ժամանակի իրողությունների և միշտ գոյային հարաբերությունների հետնախորքի վրա։

Հովհան Օձնեցու իրավիրած 726թ. Մանազկերտի ժողովում փաստութեան տեղի է ունենում հայ եկեղեցու երկու արևելյան և արևմտյան հատվածների միավորումը։ Օձնեցին կազմել է «Կանոնագիր հայոց», և ամենայն հափանականությամբ, նաև «Գիրք բդրոց» ժողովածուները։ Դա հնարավորություն է տվել հստակեցնել հայ եկեղեցու դափանական դիրքը և բացառել այլադական եկեղեցիների մեղադրանները և հարակունեները հետագայում։ Հատկանշական է, որ հետագա դարերում, երբ փորձ էր արփում եկեղեցու միջոցով Հայաստանում հասնել բաղական ազդեցության, հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները մատնացույց էին անում Հովհան Օձնեցու սահմանած դափանական կարգը։

Անկախ պետության չգոյության կ 703-705թ. ապստամբության ժամանակ նախարարներից շատերի բնաջնջման և գերեվարության

պայմաններում առավել կարևորվում էր եկեղեցական գործիչների դերը և պատասխանաւուրյունը՝ ժողովրդի նակատագրում։ Հետևարար կարևորվում էր Հովհան Օձնեցու՝ որպես հայոց կարողիկոսի, բաղադրական դիրքորոշումը և ծավալած գործունեությունը։

Հովհան Օձնեցու եկեղեցական բարեփոխումները և գումարած եկեղեցական ժողովները սերտորեն առնչվում են նրա բաղադրական կողմնորոշմանը և բաղկեդունականության դեմ պայքարին։

Աղանդավորական շարժումների դմ պայքարը նույնական առաջնահերթ նշանակության ունենալի հասարակական-բաղադրական կյանքում։ Ներկա ուսումնասիրության մեջ փորձ է արված այլ տեսանկյունից հետազոտել Բյուզանդական կայսրությունում և Հայաստանում, տարածում գտած պավլիկյան շարժման պատմությունը։ Նոր մոտեցում է ցուցաբերված նաև 726թ. Մանազկերտի եկեղեցական ժողովում հաստատված հայ-աստրական դափանական միության մեջորման հայցերին։

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները. Ուսումնասիրության նպատակն է ի մի հավաքել 7-րդ դարի վերջի և 8-րդ դարի սկզբի հայ եկեղեցու պատմության առնչվող ձևորերը, հայ և օտար սկզբանդրյութերի տեղեկությունները։ Մատենագրական, բանահյուսական, պատմական և բանասիրական նյութերի ու հետազոտությունների հիման վրա ամբողջացնել Հովհան Օձնեցի հայոց կարողիկոսի կյանքն ու գործունեությունը։ Ներկայացրել ենք արարա-բյուզանդական բաղադրական հարաբերությունները և նրանց ազդեցությունը Հայաստանի հասարակական-բաղադրական կյանքի, նաև հայ եկեղեցու վրա։

Ատենախոսության հիմնական նպատակներից մեկը Հովհան Օձնեցու մատենագրական ժառանգության ուսումնասիրությունն ու արժեկուրումն է, ձեռագրերում երան վերագրող և վերաբերող աշխատությունների գիտական շրջանառության մեջ դնելը։ Հովհան Օձնեցու իրավիրած 719թ. Դվինի և 726թ. Մանազկերտի եկեղեցական ժողովների գործունեության և սահմանած կանոնների արժեկուրումը հայ եկեղեցու ազգայնացման համատեսություն։

Ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկը բաղկեդունականության և աղանդավորական շարժումների դեմ Հովհան Օձնեցու մղած պայքարի վերանայումն ու վերամաստագրումն է։ Կարողիկ ուսումնասիրութերը, հետևելով դեռևս Մ. Զամչյանի կողմից առաջ բաշխած տեսակետներին, շանում են Հովհան Օձնեցուն ներկայացնել իրեւ ոչ

հակաֆաղկեդոնական գործչի, համարելով, որ նրա «Ընդդէմ երևութականց» նառը գրված է երկարնակության դիրքերից հայ եկեղեցու մշաբնակ վարդապետության դեմ: Մինչեռ, հարկ է գնահատել Հովհան Օձնեցու ժաղաքետին հատուկ դիվանագիտությունը, որով նա իր աշխատություններում ոչ մի արտահայտություն բույլ չի տալիս հունադաշնականների նկատմամբ, որպեսզի չգրգոր բյուզանդացիններին, իսկ հունական եկեղեցու սովորույթների մերժումը հայ եկեղեցուց պատճառաբանում է սույկ «նախնեաց մերոց աւանդութեանը» հետևելու ձգտումով:

Խորեղային պատմագիտության մեջ պավլիկյան շարժումը դիտվել է իրք Հայաստանում ազատագրական, ժողովրդային շարժում՝ ուղղված դասակարգային թշնամինների դեմ: Սակայն սկզբնադրյուրների անկողմնակալ վերլուծությունը ցույց է տալիս, որ պավլիկյանությունը որոշակի տարածում ուներ Հայաստանի արևմտյան գավառներում, որոնք, սակայն, գտնվում էին Բյուզանդական կայսրության դարավոր տիրապետության տակ և ենթակա էին բյուզանդական հասարակության օրենքներին: Ռւստի պավլիկյանությունը հարկ է դիտել որպես այդ իրականության ծնունդ:

Ուսումնասիրության գիտական նորույթը և գործնական նշանակությունը. Վերը բվարկված խնդիրների և հարցերի բննությամբ է պայմանավորված ներկա աշխատանքի նորամուծությունները:

ա) Հայագիտության մեջ առաջին անգամ հայ և օտար սկզբնայուրների, ժողովրդական բանակյուսության տվյալների, պատմական, բանասիրական և գավանարանական ուսումնասիրությունների բննությամբ և համադրմամբ ներկայացվում է. Հովհան Իմաստասեր Օձնեցի կարողիկով կյանքն ու գործունեությունը:

բ) Առաջին անգամ փորձ է արվել 726թ. Մանազկերտի ժողովի հրավիրման և այնտեղ եաստատված հայ-ասորական դաշտանական միության հարցերը դիտարկել արարա-բյուզանդական հակամարտության և արարական խալիֆարի միարնակ ժրիստոնեական եկեղեցների նկատմամբ վարած ժաղաքականության դիրքերից:

գ) Ճշգրտել ենք Հայոց իշխան Սմբատ Բյուրատյան թագրատունու մահվան բվականը և Մանազկերտի ժողովին նրա մասնակցության հարցը:

դ) Փորձ է արված Հայաստանում պավլիկյան շարժման, գաղափարաբանության և հայոց պատմության մեջ նրա դերը ներկայացնել նոր դիրքերից:

ե) Ճշգրտել ենք հայ իրականության մեջ առաջին անգամ պավլիկյանների մասին հիշատակություն պարունակող Աղվանքի եկեղեցական ժողովի հրավիրման թվականը:

զ) Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում Մաշտոցի անվան մատենադարանի ժեռագրերում պահպանված Հովհան Օձնեցուն վերագրվող բնագրեր:

Աշխատության ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել 7-8-րդ դարերի Հայաստանի պատմության, հայ եկեղեցու, Հայաստանի միջնադարյան աղանդների, հայ մատենագրության, հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունների պատմության, դպրոցական և բուհական դասագրերի շարադրման համար, ինչպես նաև հայ իրավունքի, փիլիսոփայության և մշակույթի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում և առանձին մենագրություններում:

Հետազոտության մեթոդիկան. Ներկայացվող ատենախոսությունը հիմնվում է հայ և օտար սկզբանադրյուրների, ժողովրդական բանեյության տվյալների, պատմական և բանասիրական ուսումնասիրությունների համակարգված բննության և վերլուծության վրա:

Աշխատանքը գրված է մենագրության ձևով և զերծ է բաղական կաղապարի ազդեցությունից:

Ուսումնասիրության փորձաքննությունը. Ատենախոսությունը բննարկել է և ներաշխավորվել պաշտպանության երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի: Հին դարերի պատմության բաննում: Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են հեղինակի երկու հոդվածներում և զեկուցման մեջ:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջարանից, օգտագործված գրականության ցանկից, Հովհան Օձնեցուն վերագրվող անտիկ բնագրերից և հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված է ուսումնասիրվող թեմայի գիտական արդիականությունը, աշխատանքի և բարձրացված հարցերի կարևորությունն ու ընդհանուր բնութագիրը: Ներածության մեջ

հնարավորին չափ սեղմ ներկայացված է սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը: Հատկապես ուշադրություն է դարձվել մեջնադարյան մատենագիրների և ուսումնասիրողների երթեմն ծայրահղործներին հակադիր վերաբերմունքին՝ Հովհան Օճնեցու գործ՝ և վաստակի հանդեպ:

Գլուխ առաջին «Հովհան Օճնեցու-ժամանակը», կյանքը և գործունեությունը».

Այս գլխում համառոտ կերպով ներկայացված է Հայաստանի 7-րդ դարի վերջի և 8-րդ դարի սկզբի հասարակական-ժաղաքական վիճակը, տարածաշրջանի երկու գերեզր տերությունների՝ Արարական խալիֆարի և Բյուզանդական կայսրության փոխհարաբերությունները և դրանց ազդեցությունը. Հայաստանի վրա: Առանձին ուշադրություն է դարձված Հայաստանի ներքանական կյանքում եկեղեցու գերին և եկեղեցա-ժաղաքական հարաբերություններին, երկարնակության և միաբնակության շուրջ պատվող դավանարանական վեճերին: Հատկապես ընդգծել ենք խալիֆարի և Բյուզանդիայի ժաղաքականությունը եկեղեցու հանդեպ, հայ եկեղեցու հարաբերությունները ժաղկերանականության և կայսերական եկեղեցու հետ: Այս առումով քննորոշ է Եղիշ Արքիշեցի (703-717) հայոց կարողիկոսի և արաբների համագործակցությունը, որի շնորհիվ կամսվեց Աղվանի եկեղեցու ժաղկեդոնականացումը և անշատումը հայկականից: Ըստ Մովսես Կաղանկատվացու մի տվյալի Եղիշ Արքիշեցուն Աղվանի կատարած ուղևորության ժամանակ ուղեկցում էր Հովհաննես առումով մի վարդապետ, որն ըստ որոշ ուսումնասիրողների՝ Հովհան Օճնեցին էր: Այնուհետև փորձել ենք նշգրտել 693-725թ.թ. որպես Հայոց իշխան պաշտոնավարած Միքայ Բյուրատյան Բագրատունու մահվան թվականը:

Հովհան Խմատասեր Օճնեցու կյանքի և գործունեության մասին ամրողական և համակարգված տվյալներ չկան: Որոշ տեղեկություններ իմանում ենք իր՝ Հովհան Օճնեցու մեջ հասած երկերից, Հայումավորից, ավելի ուշ շրջանի հայ պատմագիրների աշխատություններից և ժողովրդական ավանդագրույցներից:

Հովհան Օճնեցու ծննդյան թվականը հայտնի չէ, սակայն հավանական է, որ նա ծնված լինի 670-ական թ.թ.: Խսկ ծննդավայրը հայտնի է. «Էր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն որ կոչի Օճուն, ազատ տանէ քաջաց և առաջիննաց»:

Հարկ է կարծել, որ Հովհան Օճնեցին հիմնավոր, ժամանակի շափանիշներով փայլուն կրություն էր ստացել: Մատենագրության մեջ որպես Օճնեցու ուսուցիչ հիշատակվում է Թեոդորոս Քորենավիրը:

Հովհան Օճնեցու գործունեության կարևոր փուլերից են արարամիապետին այցելելը, 719թ. Դվինի և 726թ. Մանազկերտի եկեղեցական ժողովների երավիրումը: Ամիրապետին այցելելը կարևորվում է երանով, որ Օճնեցուն ամիրապետին միջև պայմանավորվածությունն է առել քերպում հայկական եկեղեցիները և եղուորականությանը հարկերից ազատելու, քիսունյաներին պաշտամունքի ազատություն տալու և 703-705թ.թ. ապստամբական շարժումների ժամանակ գերի աւարված հայ: Անխարաբների ազատման շուրջ: Դվինի եկեղեցական ժողովը հայտնի է իր ընդունած 32 կանոններով, որոնք նպատակ ունենին ամրապնդել եկեղեցոյն հիմքերը, կանոնակարգել արարողակարգը և հայոց դավանանքը ապահովագրել ժաղկեդոնական ազդեցություններից ու աղանդներից: Մանազկերտի եկեղեցական ժողովը երավիրությամբ, որտեղ նզումքներ երատարակվեցին Սևերոս Հալիկառնասու ուսումներին հետևողների, ինչպես նաև երկարնակներից ժաղանողների դեմ: Մանազկերտի ժողովում հիմք դրվեց հայ-տառական դավանական միուրյանը, որը սակայն, երկար չգոյատևեց:

Հովհան Օճնեցու գործունեության մեջ առանձնակի տեղ է գրավում եկեղեցական ժամերգությունների հնտակեցումը, որով կանոնակարգվում են եկեղեցական առների ժամանակ կատարելու շարականները:

«Կանոնագիրք Հայոցի» կազմումը՝ Հովհան Օճնեցու կողմից երևույթ է հայ իրավունքի պատմության մեջ և այն հարկ է դիտել իրեն 8-րդ դարի սկզբի հասարակական, ժաղաքական և եկեղեցական հարաբերությունների տրամարանական զարգացում, որի նշանակությունը անշափ մեծ էր նաև հետագա ժամանակներում և հայ եկեղեցու ազգայնացման համատեսուում: Թերեւ որպես Կանոնագրքի շարունակություն պետք է դիտել «Գիրք բղոց» ժողովածուն որի կազմումը նույնական վերագրվում է Հովհան Օճնեցուն:

Հովհան Օճնեցու Խմատասեր մականունը վկայում է, որ նա ժամանակակիցների և հետագա մատենագրների շրջանում հոչակած է եղել իր փիլիսոփայական-աստվածարանական գիտելիքներով:

Ատենախոսության առաջին գլխի մեջ տրված է Օճնեցուն վերագրվող երատարակած և անտիպ աշխատությունների ընդհանուր բնութագիրը: Այնուհետև ներկայացված է ժողովրդական բանահյու-

սուրյան մեջ պահպանված Հովհան Օձնեցու կյանքին, գործունեությանը և նրա անվան հետ կապված տեղանունների մեջնարանությունների մասին պատմող ժողովրդական ավանդագրույցները, որոնք տեղ են գտել Հայսմավուրբում, իայ պատմիչների երկերում, բանասիրական ժողովածուներում և դարասկզբի մամուլում: Այդ պահնդագրույցներում Հովհան Օձնեցին ներկայացված է որպես հրաշագործ սուրբ, որը մեծ շանք է գործադրել իր հայրենակիցներին օտար և օտարադավան հարստահրողներից ազատելու համար:

Հայսմավուրբում ապրիլի 17-ը նշվում է իրրև Հովհան Օձնեցու տոն և հայ եկեղեցին դարեր շարունակ տոնում է Խմաստասեր հայրապետի օրը, որն ամենայն հավանականությամբ, իր մահվան օրն է: Ժողովրդական ավանդությունը և հայ պատմագիրների վկայությունները հավասում են, թե Հովհան Օձնեցին իր կյանքի վերջին շրջանն անցկացրել է հայրենի Օձուն գյուղում:

Գլուխ երկրորդ. «Հովհան Օձնեցու եկեղեցական բարեփոխումները և պայքարը բաղկաղնականության դեմ».

Հովհան Օձնեցի կարողիկոսի գործունեության մեջ առանցքային տեղ են գրավում նրա եկեղեցական բարեփոխումները և պայքարը բաղկաղնականության դեմ: Թե մեկը, և թե մյուսը պայմանավորված էին ժամանակի պատմական իրողություններով:

7-րդ դարի երկրորդ կեսից բյուզանդական երկարնակ եկեղեցին ավելի էր մեծացրել իր ճնշումները հայ եկեղեցու վրա: Հույն և հունադավան հայ բարողիչները հատկապես ակտիվ գործունեություն էին ծավալել Աղվանիկում և Սյունիկում: Խսկ 670թ. Տրուլի եկեղեցական ժողովի ընդունած կանոնները ուղղակիորեն դատապարտում էին Հայաստանի բյուզանդական մասի հայ եկեղեցու ավանդույթներով ղեկավարվող հոգևորականներին:

Պայինի 719թ. եկեղեցական ժողովի սահմանած 32 կանոնները հիմնականում ուղղված են եկեղեցու արարողակարգում տեղ գտած բաղկաղնական նորամուծությունների դեմ: Ժողովի կանոններով սահմանվում է եկեղեցիներում սեղանը և ավազանը պատրաստել ֆարից և անշարժ (կանոն ԺԲ, ԺԳ), սուրբ մեռոն օրինելու իրավունքը վերապահել միայն հայրապետին և եպիսկոպոսներին (կանոն Թ), պատարագի ժամանակ հացն անխմոր և գինին անխառն մատուցել (կանոն Է), պատարագության արարողությունը կատարել միայն եկեղեցիներում (կանոն ԺԵ):

Պայինի ժողովը սահմանում է պասի, աղոթքների և ժամերգության կատարման հստակ կարգեր, որոնք թե սահմանված և հաստատված էին տիեզերական և հայ եկեղեցու նախկին ժողովների կանոններով, սակայն բաղկաղնականության ազդեցության տակ կամ ձևափոխվել էին, կամ չեին պահպանվում որոշ եղանականների կողմից:

Ժողովն անդրադառնում է նաև պատկերապաշտության խնդիրներին, մասնավորապես խաչի և Քրիստոսի պատկերի երկրպագությանը: 6-7-րդ դարերում, հունական եկեղեցու ազդեցության տակ Հայաստանում արմատավորվել էր խաչի և պատկերների պաշտամունքը, որն առաջ էր բերում վարդապետական որոշ շրջանների և աղանդավորների (մասնավորապես պավլիկյանների) մեղադանները: Դվինի ժողովի իէ կանոնը սահմանում է փայտից կամ որևէ այլ նյութից պատրաստված խաչը օրինելուց և մեռոնով օծելուց հետո «պատի ընդունել և երկրպագութիւն մատուցանել»: Հաջորդ՝ իւ կանոնը մեկնարանում է խաչի երկրպագության իմաստը. «Զայնոսիկ, զորս օրինութեամբ և օծուրեամբ կատարեալ է, որք միանգամ և իցեն աստուածային խորհրդոյն գործարանի, պարտ է զնոսա պատուել և պաշտել, երկրպագել և համբուրել, զի ի նոսա բնակէ Հոգին սուրբ, և նոյօք մատակարարէ ի մարդիկ զահպանութիւնս և զշնորհս թժշկութեան ախտից հոգուց և մարմնոց»: Սա հայ իրականության մեջ պատկերների պաշտամունքի առաջին սահմանումը և իմանավորումն է:

Մերժելով հունական եկեղեցու սովորույթները հայ եկեղեցու արարողակարգից, միևնույն ժամանակ Հովհան Օձնեցին հասկանում էր, որ շատ սովորույթներ արդեն եկեղեցական ընդգրկվել են եկեղեցու ծիսակարգում: Դրանց արմատավորումը եկեղեցու պատմական զարգացման արդյունք էր և արմատափիլ անելը դժվար կլիներ ու անիմաստ: Ուստի Հովհան Օձնեցին եկեղեցու արարողակարգում տեղ գտած որոշ նորամուծությունների օրենքի ուժ է տալիս:

Պայքարը բաղկաղնականության դեմ և Հովհան Օձնեցու եկեղեցական բարեփոխումները բնավ նպատակ չունեին մեկաւացնել հայ եկեղեցին և խզել նրա կապերը բրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: Հակառակը, Հովհան Օձնեցին պատգամում է. «Հարկ է հետևել զկնի բոլոր բրիստոնականաց»: Եվ եթե միայն լինում են խնդիրներ, որոնց վերաբերյալ «ամենայն բրիստոննեից աւանդութիւնը» և «աշխարհիս մերոյ մարդկան աւանդութիւնը» տարբեր կարգեր են սահմանում, ապա «արժան է (...) ոչ խոնարիել յայլ ազգաց բրիստոննեից յաւանդութիւնը (...) և չառնել նորամուս ինչ»:

Հայաստանի եկեղեցին կարևոր տեղ էր գրավում Արարական խալիքարի արտաքին բաղադրական հարաբերություններում։ Հաշվի առնելով Հայաստանի առանձնահատուկ աշխարհա-քաղաքական դիրքը, եկեղեցու կարևոր դերը երկրի ներքաղաքական կյանքում և նրա հակամարտությունը՝ բաղկեդոնականության (իմա՝ Բյուզանդական կայսրության) հետ, արարեներն, անշուշտ, պետք է ճգնածին եռվանավորել և աշակցել հայ եկեղեցուն։ Եվ որպեսզի պվելի արդյունավետ օգտագործեն Բյուզանդիայի ներսում և հարեւանությամբ բնակվող միարենակ քրիստոնյաների հակամարտությունը կայսրության հետ, արարեները ճգնած էին դաշտանական դաշինք ստեղծել տարածաշրջանի երկու ամենամեծ միարենակ եկեղեցիների՝ հայերի և Հակոբիկ ասորիների միջև։

Սակայն հայերի և ասորիների միջև կային բազմաթիվ դավանական տարածայնություններ և վեճեր։ Դրանք հարթելու նպատակով որոշվում է երավիրել միացյալ եկեղեցական ժողով։ Նախապես որոշված էր ժողովը գումարել Արծն բաղադրությում, սակայն Արմինայի կառավարիչ Զարրախ Իրեն Արդալախը (722-730) պահանջեց, որպեսզի ժողովը տեղի ունենա իր իշխանապետության սահմաններում։ Նոր ժողովատեղի ընտրվեց Մանազկերտ բաղադր, որտեղ և 726թ. գումարվեց հայ-ասորական եկեղեցական ժողովը։ Ժողովատեղիի ընտրության հարցում արար ոստիկանի միջամտությունը հիմք է տալիս ենթադրելու, որ հայ-ասորական դավանական միությունը նախաձեռնել և հովանափորում էին արարները։

Համեմատաբար ուշ շրջանի հայ մատենագիրները (Սամուել Անցի, Վարդան Արևելցի, Ստեփանոս Օքբելյան, Կիրակոս Գանձակեցի) շեշտը դնում են Մանազկերտի ժողովի ընդունած հակաբաղկեդոնական որոշումների վրա՝ անուշադրության մատենելով այսուհետ հաստատված հայ-ասորական դավանական դաշինքը։ Մինչդեռ, Մանազկերտի ժողովի կանոնները իմբնականում դատապարտում էին Սևերոսի և Հովհանոս Հայկառնացու ուսմունքները, որ երկու եկեղեցիների դավանական ամեմածայնության հիմնական պատճենն էին։

Մանազկերտում Հովհան Օձնեցին հայ եկեղեցու համար սահմանում է Քրիստոսի ծնունդը տոնել ոչ թե դեկտեմբերի 25-ին, ինչպես բաղկեդոնականները, այլ հունվարի 6-ին։ Դիոնիսիոս Բարսաւարի տեղեկությունների համաձայն, Մանազկերտի ժողովից հետո Հովհան Օձնեցին երեք եպիսկոպոս ուղարկեց Ասորին, որպեսզի վերշիններս կանխեն այնուեղ բնակվող հայ բաղկեդոնականների գործունեությունը։ Հիշատակություններ կան այն մասին, որ Ասորին ուղար-

կված եայ եղանորականները այստեղ զրադաշտում էին ասորերենից հայերն բարգմանություններ կատարելով։

Շահապիվանի ժողովից սկսած եկեղեցական ժողովները Հայաստանում ձեռն էին բերել ազգային-եկեղեցական բնույթը և դրանց ակտիվ մասնակցություն էին ունենում նաև նախարարներն ու իշխանները։ Մանազկերտի եկեղեցական ժողովում աշխարհականների մասնակցության մասին հիշատակությունները չկան։ Այս հանգամանքը կարող է ունենալ երկու բացատրություն։ 703-705թ. պատամբության ժամանակ արարեները բնաշնչել էին հայ նախարարների առավել ակտիվ մասին, իսկ մնացածներն էլ գոնվում էին մեկուսացած վիճակում և որևէ կշիռ չունեին երկու հասարակական կյանքում, և երկրորդ, Մանազկերտի ժողովում բննարկված էին գուտ դավանարանական հարցեր, որոնք ուղղակիորեն կապ չունեին ազգային խնդիրների հետ, ուստի աշխարհականները հարկ չեն համարել մասնակցել։

Հայկական աղբյուրներում հիշատակություններ կան (Մանազկերտի ժողովում Ստեփանոս Սյունեցու և ոմն Սմբատ Բագրատունի ասպետի երկարնակության շուրջ վեճի վերաբերյալ։ Ուսումնասիրողները, մասնավորպես Ա. Տեր-Ղևոնդյանը, ենթադրում են, թե Սմբատ Բագրատունի ասպետը նույն ինքը Սմբատ Բյուրատյան Բագրատունի Հայոց իշխանն է, որը որոշ ժամանակ գտնվելով Բյուզանդիայում կարող էր հարած լինել երկարնակությանը։ Սակայն Մովսես Կաղանեակատագու տվյալներով, Մըրատ Բյուրատյանը վախճանվել է 725թ. և 726թ. Մանազկերտի ժողովին մասնակցել չէր կարող։ Միկնույն ժամանակ Ստեփանոս Սյունեցու հետ վիճարանող Սմբատի մասին Ստեփանոս Օքբելյանը գրում է. «ընդ երկարնակ իշխանի միոյ», այսինքն՝ ոմն երկարնակ իշխանի հետ։ Հայոց իշխանի համար միանգամայն անտեղի կլինենք գրության այն ձևը։ Իսկ Գրիգոր Մագիստրոսը միանգամից ցրում է այս շփորությունը և հաստատում, որ հիշատակվող երկարնակ Սմբատը ոչ մի կապ չունի Հայոց իշխան Սմբատ Բագրատունու հետ. «...պիդն Սմբատ անիծեալն այն երևցաւ յաւուրս տեսան Ցովհաննիսի և Սմբատայ Բագրատունու, ուսեալ զչար մոլութիւն յումեննէ պարսկական բժշկէ և յատելարաշխ մոգէ, զոր Մըջուսիկդ կոչէք»։

Գլուխ երրորդ. «Հովհան Օձնեցու պայմանագիր աղանդավորական շարժումների դեմ».

8-րդ դարի երկրորդ տասնամյակում կարողիկոսական գահ բարձրանալով Հովհան Օճնեցին բաղկեդոնականության դեմ՝ պայքարին զուգորդեց նաև պայքարն աղանդավորական շարժումների դեմ։ Հայտնի են Օճնեցու «Ընդդեմ պատղիկեանց» և «Ընդդեմ երևուրականաց» հառերը, որոնք այդ պայքարի արդյունք են։

Խորհրդային պատմագրությունը պավլիկյան շարժումը ներկայացնում է որպես ազատագրական, ժողովրդային շարժում, որ ծագել է Հայաստանում և ուղղվել դասակարգային քշնամիների դեմ։ Մինչեւու, պետք է նկատի ունենալ, որ պավլիկյանները լայն տարածում էին գտնել Հայաստանի արևմտյան հատվածում, որն արդեն երեխ-չորս հարյուրամյակ գտնվում էր Բյուզանդական կայսրության տիրապետության տակ և ենթակա էր կայսրության հասարակական իրողություններին։ Ուստի եթե նույնիսկ պավլիկյանությունը ծագել է պատմական Հայաստանի տարածքում, ապա՝ միևնույն է այն բյուզանդական հասարակության ծնունդ է և պավլիկյան շարժումը հարկ է դիտել այս դիրքերից։

Հայ իրականության մեջ պավլիկյան շարժման մասին տուաշին հիշատակությունը, ըստ Հ. Բարբելյանի, հարկ է համարել Աղվանիքի եկեղեցական ժողովի որոշման տեխսոր։ Սակայն Աղվանեում 703-705.թ. տեղի է ունեցել երկու եկեղեցական ժողով։ Մովսես Կաղանականավացու հաղորդած և հարակից տվյալներն ավելի ուշադիր քննելու դեպքում պարզ է դառնում, որ պավլիկյանների մասին հիշատակող որոշումը վերաբերում է Աղվանիքի երկրորդ եկեղեցական ժողովին, որ հրավիրվել է 705թ. Աղվանիք Միհայել կարողիկոսի նախաձեռնությամբ՝ որոշ իշխանների արյունակցական ամուսնությունների փաստի առքիվ։

Հովհան Օճնեցու պայքարը պավլիկյանների դեմ ուներ որոշակի դժվարություններ, չսնի որ արարենք, այս շրջանում, հովանավորում էին նրանց։ Պավլիկյանների զինված համայնքների գոյությունը արարա-բյուզանդական սահմանում խիստ նպաստավոր էր, որովհետև 7-րդ դարի վերջերին և 8-րդ դարի սկզբին արարա-բյուզանդական սահմանը որոշակի չէր, գոյություն ուներ մի ընդարձակ սահմանային գոտի (սուլուր), որ ճագվում էր Տարտոսից մինչև Կարին։ Այս գոտու վաղաքներն ու բերդերը անընդհատ ձեռքից-ձեռք էին անցնում՝ անհանգիստ վիճակում պահելով երկու կողմերին։ Արարեներին ձեռնուու էր սահմանային գոտու հյուսիսային հատվածում զինել և հովանավորել պավլիկյաններին, որոնք հակամարտության մեջ գտնվելով կայսրության հետ, հարձակման դեպքում առաջին հարվածն իրենց վրա կընդունեին։

Այս վիճակը հատկապես բնորոշ էր արարական տիրապետության առաջին շրջանում, եթե սահմաններն ամրացնելու և մերձական տարածքները մահմեդական ցեղերով բնակեցնելու բարձականությունը մեծ քափ չէր ստացել։

Այնուամենայնիվ, Հովհան Օճնեցին Դվինի ժողովի իթ կանոնը սահմանում է ընդդեմ պավլիկյանների։ Սակայն ոչ քե նրանց դեմ սահմանական պայքարի նկատառություններով, ինչպես կարծում է հետագործների մեծ մասը, այլ ավելի՝ կանխարգելման։

Պետքու Միկիլիացու հաղորդած տվյալների փոքր-ինչ այլ տեսանկյունից բնորոշյունը հիմք է տալիս եղրակացնել, որ Բյուզանդական կայսրությունը որոշակի նպատակառուղղված բաղադրական կայսրության նահանգներից դեպի Հայաստանի սահմանները չշելու ուղղությամբ։

«Ընդդեմ պավլիկյանց» հառում Հովհան Օճնեցին հիշատակում է, որ պավլիկյանները կենտրոնացած էին Զրկայում, որտեղ և նրանց միացան աղվանից պատկերամարտները։ Մեր կարծիքով Զրկան պիտի լինի Տիգրիսի ակունքների մոտ, հավանաբար Բյուրակնյան լեռների շրջանում։ Ուրիմն Բյուրակնյաց լեռներից արևելք պավլիկյան համայնքները չեն եղել, այլապես աղվանից պատկերամարտները կմիանային նրանց։

Հայաստանում պավլիկյան շարժման մեծ ընդգրկման և տարածման դեմ է խոսում այն փաստը, որ 9-րդ դարի 30-ական թվականներին հայտնի էին պավլիկյանների ընդառներ վեց համայնք, որոնք հիմնականում գտնվում էին կայսրության հյուսիս-արևելյան շրջաններում, Պննտոսում և միայն մեկը՝ Մանանաղիում։

Պավլիկյանների դեմ պայքարի հարցում Հովհան Օճնեցի կարողիկոսն իրեն դրսնորեց որպես նկուն և զուսպ գործի։ Արարեներին չհակառակվելով և նրանց չգրգռելով հանդերձ, նա փորձում էր մեկուսացնել պավլիկյաններին և բռւյլ չտալ նրանց տարածվելու Հայաստանում։ Հետագա պատմությունը ցույց է տալիս, որ Օճնեցին կարողացավ դա անել։ Պավլիկյանները կենտրոնանալով Բյուզանդիայի սահմանակից Մանանաղի և հարվան գավառներում, 8-րդ դարի կեսերին գրեթե լիովին կազմալուծվեցին։ Համենայն զեպս, այդ շրջանից սկսած հայկական աղբյուրները լուսմ են Հայաստանում նրանց գոյության մասին։ Խակ Ղեղնի պատմիչի հիշատակությունը «որդիի յանցանացի» մասին, որ երբեմն վերագրվում է պավլիկյաններին, թերևս, ավելի շուտ վերաբերում է Գրիգոր Մամիկոնյանի ուխտապահներին։ Մինչդեռ բյուզանդական աղբյուրները տեղեկացնում են. պավլիկյանների

տարածման և մեծ ընդգրկման մասին կայսրության արևելյան և հյուսիս-արևելյան նախաճաներում, որոնց դեմ կենտրոնական իշխանությունը դաժան և անողոք պայքար պիտի ծավալեր:

Մյուս երգածը, որի դեմ պայքարում էր Հռվիան Օձնեցին, երևութականությունները: Եթե պակիլիյաններն ունեին զինական ուժ և համագործակցում էին արտաֆին ուժերի հետ, դրանով իսկ հնարավորություն չտալով Օձնեցուն ավելի գործուն պայքար ծավալել երանց դեմ, ապա երևութականները գործում էին հենց եկեղեցու ներսում:

Երևութականներ էին կոչում Հռվիանոս Հալիկանացու (Զ դար) ուսմունքի հետևորդներին, որոնք ծայրահեղության էին հասցնում քրիստոնեության մեջ միաբնակության սկզբունքը, համարելով, որ Քրիստոս ուներ միայն աստվածային բնույթ և նրա բոլոր մարդկային կրթերը և կարիքները առերևույթ էին, ոչ իրական: Հայ իրականության մեջ երևութականության առաջնորդ է համարվում Հռվիան Մայրագումեցու աշակերտ Սարգիսը:

Մեծ գործեր առաջ բերելու հանայարեին՝ հավասարապես վտաճագավոր են բոլոր ծայրահեղությունները: Ներկա պարագայում միաբնակ եկեղեցու ներսում ծայրահեղ միաբնակությունը պակաս վնասարեր և վտաճագավոր չէր, բայ երկարնակության բացահայտ պաշտպանությունը կամ պակիլիյանների զինված շարժումը:

Մինչդեռ, Հռվիան Օձնեցուն, իր ձեռնարկումները հաջողելու համար, անհրաժեշտ էր վարել հավասարակշիռ և նկուն բարձրականություն: Իսկ հայ եկեղեցուն Հալիկանացու ուսմունքին հարելու մեջ արդեն մեղադրում էին ոչ միայն հույները, այլև միաբնակ ասորիները:

Հռվիան Օձնեցին գրում է իր «Ընդդեմ երևութականաց» հառը, որն ամենայն հավանականությամբ, նա արտասանել է 726թ. Մանագկերտի հայ-ասորական միացյալ եկեղեցական ժողովում: Ճառը զուտ աստվածարանական բնույթ ունի և չի պարունակում կոնկրետ փաստեր կամ անուններ, որոնց միջոցով հնարավոր կլիներ, պատկերացում կազմել երևութականների գործունեության և ընդգրկման մասին: Կարուիկ ուսումնասիրողների կողմից այս հառը ներկայացվում է որպես ընդդիմախոսություն՝ շարադրված երկարնակության դիրքերից միաբնակության դեմ ընդհանրապես:

Մանագկերտի ժողովը, բայ կեդոնականության հետ միասին, միանշանակորեն դատավարուում է Հռվիանոս Հալիկանացու ուսմունքը և նույնում նրանց, ովքեր կենացնեն այդ վարդապետությանը. «Ամենայն

ոք, որ ոչ խոստովանեսցի, թէ Քրիստոս ի մարդկային մարմնի զամբանայն մարդկային կիրա կրեալ իցէ, բաց ի մեղաց, այլ ասիցէ, ըստ աստուածութեան անկեալ իցէ ընդ կրիմ, կամ ասիցէ, թէ մարմին նորա անհողորդ լեալ իցէ մարդկային կրից և պավանացու մարմին մի կրեալ իցէ զայնոսիկ, նզովեալ եղիցի» (Նզովք Ը):

Թեև այս նզովքում կոնկրետ չի հիշատակվում Հռվիանոս Հալիկանացու, Հռվիան Մայրագումեցու կամ Սարգսի անունները, սակայն հստակ է, որ այս և Մանագկերտի ժողովի ընդունած ևս մի ժամի նզովքները (Նզովք Բ, Գ, Զ, Է, Թ) ուղղակիորեն վերաբերում են հուլիսանոսականներին:

Եւ Տեր-Մինասյանը կարծում է, որ հայերը Հռվիան Օձնեցուց առաջ և նրանից հետո էլ շարունակում էին համակրել Հալիկանացու ուսմունքը: Վերջութելով Մանագկերտի ժողովի սահմանած նզովքները, նա գտնաւմ է, որ դրանք ըստ էության դատավարում էին միայն ծայրահեղ հուլիսանոսականությունները, մեալով, սակայն, հուլիսանոսական դիրքերում: Եւ Տեր-Մինասյանը նույն կերպ է գնահատում նաև Օձնեցու «Ընդդեմ երևութականաց» հառը: Սակայն այսուեղ պետք է նշել, որ արդեն Հռվիան Օձնեցուց մկան, հայ եկեղեցին ազգայնանալով վեր կանգնեց բոլոր կարգի և նեսակի դավանարանական ու աստվածածություններից ու անպատճ վիճարանություններից և իր ողջ կառույցն ու ուժը մկանց ծառայեցնել միայն հայ եկեղեցու և ժողովրդի շահերի ու միաբնականության պահպանմանը: Այդ է վկայում նաև Հռվիան Օձնեցին իր «Ընդդեմ երևութականաց» հառի առաջարանում: «...այժմ աւասիկ ի ձեռն առնելոյ մարդիկ պատերազմին առ միմեանս, և ընդ միոյ գլխոյն Քրիստոսի անդամոց՝ բազում գլուխ և ցեղապետ նստեալ կացին, ապա հարկ է մեզ, որ զմին միայն ընտրեցու ունել զօրագլուխ և վերակացու կենաց մերոց, որք ոչ միայն զմեզ ասեմք, այլ և վասն նորա զիր հանեմք, և հանուն նորա խրախոյս բառնամք, յաղաց նորին ահաւասիկ և ատեամբ զատելիս նորա, զկատարելագոյնն զնոսին ատեսցուք զատելութիւն»:

Հայ մատենագրության մեջ, Մանագկերտի ժողովից հետո, երևութականներն այլևս չեն հիշատակվում: Հարկ է կարծել, որ Օձնեցու պայքարն այս ասպարեզում ևս պսակվեց հաջողությամբ: Աղանդավորական շարժումների դեմ պայքարը բաղկանականության դեմ պայքարի հետ միասին մեծ նշանակություն ունեցավ հայ եկեղեցու ազգայնացումն առաջ մղելու գործում: Հռվիան Օձնեցու կարողիկության շրջանում և մեծամասամբ հենց նրա շանհերով կանոնականության դեմ պայքարվեց հայ եկեղեցու դատավանամքը և արարողակարգը, կազմվեց և կարգվեց հայ եկեղեցու դատավանամքը:

շրջանառության մեջ դրվեց «Կանոնագիրք Հայոցը», որը հնարա-
վորություն տվեց հետագայում ավելի արագ հայտնաբերել հայ
եկեղեցու հիմնական դավանական գծից շեղվածներին և ավելի գործուն
ու արդյունավետ պայքար ծավալել նրանց դեմ՝ չենթարկվելով տարա-
բնույթ աղանդների և հերձավածների ազդեցությանը:

Վերջաբան. Ատենախոսության վերջարանում ընդհանուր գծերով
ներկայացված են հայ եկեղեցու հարաբերությունները Բյուզանդական
կայսրության և Սասանյան Պարսկաստանի հետ, հայ հոգևո-
րականության վերաբերմունքը Քաղկեդոնի ժողովի որոշումներին և հայ
եկեղեցու ազգայնացման ընթացքը:

Օգովելով արարական տիրապետության նպաստավոր հանգա-
մաններից, Եղիա Արքիշեցի և Հովհան Օճնեցի կարողիկոսները գտում
են վերջնական փուլի հասցնել քաղկեդոնականության դեմ պայքարը և
ամրապնդել հայ եկեղեցու տաննեակի դիրքը տիեզերական եկեղե-
ցիների շարքում՝ միևնույն ժամանակ չհակադրվելով և չմեկուսանալով
ընդհանուր քրիստոնեությանը:

Մանագկերտի եկեղեցական ժողովը լուծեց վերշին երկու
հարյուրամյակների համար խիստ հրատապ հարց. փատորեն կայացավ
հայ եկեղեցու արևմտյան և արևելյան հատվածների միավորումը:
Կազմվեց «Կանոնագիրք Հայոցը», որն ըստ էության հայ եկեղեցու
սահմանադրությունն էր և կոչված էր անխախտ պահել հայ եկեղեցու
դավանական դիրքը և եկեղեցու կառույցը ծառայեցնել հայ ժողովրդի
կենսական շահերին:

Հովհան Օճնեցու գումարած Մանագկերտի եկեղեցական ժողովն
իր գրավոր վեճով և ընդհանուր հաստատությամբ դարձավ Շնորհալու
կազմելիք դավանարանական ձեռնարկի հիմնաքարը և գլխավոր
պաշտպանողական խարիսխը: 10-14-րդ դարերում, երբ նորից
օրախնդիր էր դարձել քաղկեդոնականության դեմ պայքարի հարցը, հայ
հոգևորականներն ու քաղաքական գործիչներն արդեն իրենց ավելի
վատահ և պաշտպանված էին գումար: Երկարնակ և քրիստոնեական մյուս
եկեղեցիներն այլևս չեին կարող հայ եկեղեցուն մեղադրել
հերձավածողության մեջ: 8անկացած մեղադրանքի պատասխանելու
համար հայ եկեղեցին ուներ ավանդույթ, պաշտոնական պատմություն և
դարեր ի վեր կանոնակարգված գործելակերպ: Պատահական չէ, որ
Գրիգոր Մագիստրոսը, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Գրիգոր
Վկայասերը իրենց վիճարանական, դավանարանական աշխատություն-
ներում և բղբերում հենվում են Հովհան Օճնեցու ժամանակներում

սահմանված հայ եկեղեցու դավանական կարգի և ավանդույթի վրա:
Այն համեմատարար անորոշ և զիջողական վիճակը, որ նկատելի էր 6-
7-րդ դարերում, այս շրջանում և հետագայում այլևս չի նկատվում,
բացառությամբ զուտ քաղաքական նկատառումներով կատարված
բանավոր խոստումների: Բարձրաստիճան հայ հոգևորականներն ավելի
վստահարար են բանակցությունների գնում հույների հետ եկեղեցիների
միավորման հարցերը բննելու: Նրանք հստակորեն գիտակցում են
եկեղեցիների միջև առկա տարրերությունները և հարկ եղած դեպքում
մատնացույց անում «նախնեաց մերոց» և «Գրիգոր Լուսավորչի
ավանդույթները»:

Բնագրեր խորագրի տակ ներկայացված են Հովհան Օճնեցուն
վերագրվող «Պատճառ աւուրցն արարչութեան» և «Քարոզ Յովհաննուն
Օճնեցույց ասացեալ» անտիպ աշխատությունները, որոնք պահպանվել
են Երևանի Մաշտոցի անվան մատենադարանի 1007 (11-12-րդ դարեր) և
1722 (1291թ.) ձեռագրերում:

Հավելվածում ներկայացված են Հովհան Օճնեցու վարքը, որի
փոքր ինչ կրնատ տարրերակը տեղ է գտել 1730թ. Կոստանդնուպոլիսում
հրատարակված Հայսմավուրքում, սակայն առանձին ուսումնա-
սիրության առարկա չի դարձել: Մաշտոցի անվան մատենադարանի 4505
ձեռագրում պահպանվել է Օճնեցու վարքի առավել ամրողական
տարրերակը, որը ներկայացված է ատենախոսության հավելվածում:

Ատենախոսության հավելվածում տեղ է գտել նաև Մաշտոցի
անվան մատենադարանի 8831 ձեռագրում հայատառ բուրքենուկ
պահպանված Պիոս 7-րդ պապի վեճոր Հովհան Օճնեցու մասին, գրված
1819թ. Կոստանդնուպոլիսում: Մեզ հայտնի տվյալներով այս փաս-
տարուղբը ևս հրատարակված և գիտական շրջանառության մեջ դրված
է:

**Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են
Հեղինակի Հետելյալ Հողվածներում.**

1. Հովհան Օճնեցի կարողիկոսի պայքարը քաղկեդոնականության
դեմ և հայ եկեղեցու ազգայնացման փուլի ավարտը, «Էջմիածին»,
1995, 1-2, էջ 18-26:

2) Հովհան Թօնեցու Եկեղեցական յրարեփոխումների բաղադրական բնույթը, (զեկուցում Մաշտոցի ամփան մատենադարանի 27-րդ գիտական մասաշրջանում, 1995թ.), Կրտսերական է «Աշուանակ» պարբերագրում, Ա., 1995թ., է, 97-111:

М. О. ПАПЯН

Иоанн Философ Одзнеци
/жизнь и деятельность/

РЕЗЮМЕ

На соискание ученой степени кандидата исторических наук, в виде диссертации мы представили жизнь и деятельность армянского католикоса Иоанна Философа Одзнеци /717-728/. Диссертация написана на основе армянских и иноязычных источников, исторических и филологических исследований.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, оригинальных текстов Иоанна Одзнеци и приложения.

Во введении даны цель и задачи диссертационной работы, представлена общая характеристика источников и литературы по теме.

В первой главе "Время, жизнь и деятельность Иоанна Одзнеци", представлены внешнее и внутреннее положение Армении в конце 7-ого, начале 8-ого в.в., роль Иоанна Одзнеци, как церковно-политического деятеля, в истории Армении и армянской церкви.

Вторая глава - "Церковные реформы Иоанна Одзнеци и борьба против халкедонитов". В этой главе исследованы решения церковных соборов созванных Иоанном Одзнеци,

их значение для армянской церкви и направленность против халкедонитов.

Третья глава - "Борьба Иоанна Одзнеци против еретических движений". Здесь исследованы некоторые вопросы истории павликианского движения в Армении, борьба Иоанна Одзнеци против них, и последователей учения Юлиана Аликарнаци.

В заключении, в общих чертах представлена роль и место деятельности Иоанна Одзнеци в истории национализации армянской церкви.

В разделе оригинальных текстов представлены не опубликованные тексты предписываемые Иоанну Одзнеци, которые сохранились в рукописях Матенадараца.

В приложении нашли место житие Иоанна Одзнеци и текст решения Римского папы Пиоса 7-ого о Иоанне Одзнеци, которые тоже взяты из рукописей Матенадараца.

Մ. Պապյան